MA-SIS

N° 17

ՄԱ-ՍԻՍ

GAZETTE DE LA COMMUNAUTÉ ARMÉNIENNE DE LILLE, Septembre 2013 – Janvier 2014

ԼԻԼԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ, Սեպտեմբեր 2013 – Հունվար 2014

LA PRÉSENCE ARMÉNIENNE À JERUSALEM

(Notes de voyage)

Les Arméniens se sont installés à Jérusalem depuis quinze siècles. Cette ville a toujours été l'un des plus importants lieux de pèlerinage pour les croyants de différentes religions. Les croyants arméniens ont eu leur contribution dans la conservation des Lieux saints de cette ville.

Jusqu'au 7e siècle les Arméniens ont construit à Jérusalem quelques monastères et églises. Parallèlement à leurs installation, des écoles, des bibliothèques et plus tard une imprimerie ont été créées. Le nombre d'Arméniens n'a jamais été très important à Jérusalem.

Le Patriarcat arménien de Jérusalem, ayant une importance universelle pour le christianisme, a été créé au 7e siècle. Il a toujours dirigé la communauté arménienne locale. Avec les Patriarcats grec orthodoxe et latin, le Patriarcat arménien fait partie des gardiens et des ayant droits des lieux saints chrétiens de Jérusalem. Ces trois Patriarcats de la Sainte Ville, sur la base d'un *statut quo*, réalisent des célébrations liturgiques dans différents sanctuaires chrétiens de la Terre Sainte, comme l'église de la Nativité à Bethléem, la basilique de la Résurrection à Jérusalem et la Tombe du Christ.



Photo : Garik Galstyan

À gauche: la basilique du Saint Sépultre (arm. basilique de la Résurrection). À droite: l'église arménienne de Saint Jean l'Évangéliste en faisant partie

ՀԱՅԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ

(Ճամփորդական նոթեր)

Հայերը Երուսաղեմում հաստատվել են մեկ ու կես հազարամյակ առաջ: Տարբեր դավանանքի հավատացյալների համար Երուսաղեմի սրբավայրերը միշտ եղել են ուխտագնացության ամենակարևոր վայրերից, հայ հավատացյալներն իրենց ուրույն ավանդն ունեցան սրբավայրերի պահպանման գործում:

Մինչև 7-րդ դարը հայերը Երուսաղեմում կառուցում են մի քանի վանքեր ու եկեղեցիներ: Հայերի հաստատվելուն զուգահեռ ստեղծվում են նաև դպրոցներ, գրադարաններ, ավելի ուշ՝ տպարան: Հայերի թիվը Երուսաղեմում երբեք շատ չի եղել:



Photos : Garik Galstyan Gauche et droite: l'entrée du Quartier arménien de Jérusalem / Աջ և ձախ՝ Երուսաղեմի Հայկական թաղամասի մուտքը

Հայ համայնքը միշտ ղեկավարել է համաքրիստոնեական նշանակություն ունեցող Երուսաղեմի Հայոց պատրիարքարանը, որը ստեղծվել է 7-րդ դարում: Հույն և լատին եկեղեցիների հետ հայոց եկեղեցին Երուսաղեմի քրիստոնեական սրբավայրերի իրավատերն է ու պահապանը: Սուրբ քաղաքի այս երեք պատրիարքությունները հավասար իրավունքի սկզբունքով պաշտամունք են մատուցում Բեթղեհեմի Սուրբ Ծննդյան, Երուսաղեմի Սուրբ Հարություն տաճարներում, Քրիստոսի գերեզմանի վրա, ինչպես նաև Սուրբ Երկրի մյուս կարևոր քրիստոնեական սրբավայրերում:

Այս իրավատիրությունը դարերից եկող ավանդույթ է՝ վավերացված բոլոր ժամանակների՝ մեկը մյուսին հաջորդող տարբեր կառավարությունների հատուկ հրովարտակներով: Դարերի ընթացքում Երուսաղեմի տիրակալները փոփոխվել են, և հայերին Սուրբ Հողի վրա ունեցած հատուկ կարգավիճակից զրկելու փորձերը միշտ ապարդյուն են եղել: Հայոց Սրբոց Հակոբեանց Մայրավանքի կենտրոնական մուտքի ճակատին տեղադրված մարմարե սալիկի վրա կարելի է կարդալ Եգիպտոսի սուլթան Սայիդ Աբումեհմետ Էլ Զահիրի (Զակմակ մականունով) 1437 թ. Անբռնաբարելիության Հրովար-

Ձախում՝ Քրիստոսի գերեզմանի տաճարը (հայ. Սուրբ Հարություն տաճարը): Աջում՝ նրա մասը կազմող Սուրբ Հովհաննես Ավետարանիչ հայկական եկեղեցին